

Արցախյան հերոսամարտի սյունեցի վետերանները Տավուշի ուղղությամբ ծավալված մարտական գործողությունների առաջին իսկ օրը՝ հուլիսի 12-ին, պատրաստակամություն հայտնեցին մեկնել կրակագիծ՝ մասնակցելու Հայաստանի Հանրապետության պետական սահմանի պաշտպանության համար մղվող ռազմական գործողություններին:

Երեքշաբթի
21 հուլիսի 2020թ.
№ 16 (532)

ՀԻՄՆԱԿԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱԳ ԵՐԿԻՐ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ
ՊԱՏԱՍԿԱՆԱՏՎՈՒԹՅԱՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru



Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Հայոց բանակն ուժգին հակահարվածով հետ մղեց ազերի-թուրքերի հերթական ոտնձգությունը Հայաստանի պետական սահմանին

Հուլիսի 12-ին՝ ժամը 12:30-ի սահմաններում, Ադրբեջանի զինված ուժերի զինծառայողները, ՌԻԱԶ մակնիշի ավտոմեքենայով Տավուշի ուղղությամբ ՀՀ պետական սահմանը խախտելու փորձ են կատարել: Հայկական կողմի նախազգուշացումից հետո ադրբեջանական զինծառայողները, թողնելով ՌԻԱԶ ավտոմեքենան, վերադարձել են իրենց դիրք: Ժամը 13:45-ին Ադրբեջանի ՇՈՒ զինծա-

ռայողները կրկնել են հայկական զինված ուժերի սահմանային դիրքը գրավելու փորձը՝ կիրառելով հրետանային կրակ, սակայն ճնշվել են հայկական կողմից եւ, կորուստներ կրելով, հետ շարտվել: Երեկոյան ադրբեջանական կողմը վերսկսել է հրետակոծել Նույն դիրքի ուղղությամբ 82 մմ ականանետից եւ տանկից: Կրակոցները պարբերաբար տարբեր ինտենսիվությամբ շարունակվել են ամբողջ

գիշերվա ընթացքում
Հակառակորդի բոլոր փորձերը թիրախավորվել են հայկական զինված ուժերի ստորաբաժանումների կողմից եւ չեզոքացվել: Հուլիսի 13-ի առավոտյան հակառակորդը վերսկսել է սադրիչ գործողությունները՝ շարունակելով հրետակոծել հայկական դիրքերի ուղղությամբ: ՀՀ ՇՈՒ ստորաբաժանումների կողմից տրվել է համարժեք պատասխան: //

Նրանք նահատակվեցին Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության համար մղվող մարտերում



ԳԱՐԻԲ ՀԱՄԲԱՐՅԱՆ



ՍՈՍ ԷԼԲԱԿՅԱՆ



ԳՐԻԸ ՄԱՅԵՎՈՍՅԱՆ



ՍՄԲԱՏ ԳԱՐԻԲԵՅԱՆ

«Սյունյաց Երկիրը» կիսում է կորստյան ծանր վիճակը եւ իր ցավակցությունը հայտնում մահացած զինվորների հարազատներին ու մերձավորներին, ինչպես եւ նրանց ծառայակից ընկերներին: Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

Ամպրոպից հետո երկինքն ավելի կապույտ է լինում, խոտերն ավելի կանաչ են լինում
Ամպրոպից հետո: Ամպրոպից հետո բարի է լինում արեւն ավելի, եվ մենք ավելի սիրով ենք իրար
Բարի լույս ասում...
ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ



Գրիշա Մաթեոսյանի աճյունն ամփոփվեց Սիսիանի քաղաքային պանթեոնում

Հուլիսի 17-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում հողին հանձնվեց թշնամու դավադիր կրակից հուլիսի 14-ին զոհված 20-ամյա կրտսեր սերժանտ Գրիշա Մաթեոսյանի աճյունը: Հուղարկվողությունը կատարվեց զինվորական արարողակարգով: Ներկա էին ԱԺ պատգամավորներ, Սյունիքի մարզպետ Հունան Դողոսյանը, բարձրաստիճան զինվորականներ, հոգեւոր հայրեր եւ հարյուրավոր սիսիանցիներ: Գրիշային հետմահու շնորհված «Մարտական ծառայության» մեդալը հանձնվեց ծնողներին: Գրիշա Մաթեոսյանի աճյունը հողին հանձնվեց զինվորական նվազախմբով՝ պատվով համազարկերի ներքո: //

Կապույտ վառելիքը կհասնի Մեղրիի չգազիֆիկացված թաղամասեր. ներդրվել է շուրջ 260 մլն դրամ

ՏԿԵ նախարարության Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը Սյունիքի մարզում մեկնարկել է երեք խոշոր բնակավայրերի մի շարք թաղամասերի գազիֆիկացման լայնածավալ ծրագիր: ՀՀ կառավարության հատկացրած միջոցներով նախատեսվում է կապույտ վառելիքը հասցնել Մեղրի միավորված համայնքի, ինչպես նաեւ Լեհվազ ու Ագարակ բնակավայրերի այն հատվածներ, որոնք գազիֆիկացված չեն: Մեղրի քաղաքում կառավարության ներդրումը կազմում է շուրջ 72.5 միլիոն դրամ, Լեհվազ բնակավայրում՝ շուրջ 56 միլիոն դրամ եւ Ագարակ բնակավայրում՝ 128.9 միլիոն դրամ: Ընդհանուր ներդրումը կազմում է շուրջ 260 միլիոն դրամ: Այսպիսով՝ ծրագրի հաջող ավարտից հետո բնական գազով կապահովվի շուրջ 500 տնտեսություն, եւս 1500 տնտեսության համար էլ գազիֆիկացման գործընթացն ավելի կհեշտանա: Ծրագիրը կավարտվի 2021 թվականին: **ՀՏՀՀ-Ի ՄԱՍՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

Աշխարհը մտահոգված է Չայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների սրմամբ



Յոնի Ֆրանցիսկոս պապի արձագանքը

Կաթոլիկ եկեղեցու առաջնորդն իր անհանգստությունն է հայտնել Չայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների սրման կապակցությամբ՝ հույս հայտնելով, որ լարվածությունը շուտափույթ կհաղթահարվի: Այս մասին Վատիկանի առաջնորդը հայտարարել է կիրակնօրյա աղոթքի ժամանակ, հայտնում է Սուրբ աթոռի մամուլի ծառայությունը:

«Մտահոգությամբ եմ հետեւում վերջին օրերին Կովկասի տարածաշրջանում Չայաստանի եւ Ադրբեջանի միջեւ գինված լարվածության աճին: Ադրբեջան եմ բոլոր նրանց ընտանիքների համար, ովքեր իրենց կյանքն են կորցրել այդ միջադեպերի ընթացքում: Յուր ունեմ, որ միջազգային հանրության միջնորդությամբ, երկխոսության միջոցով եւ կողմերի բարի կամքի դրսևորմամբ՝ խաղաղությունը երաշխավորող լուծում կգտնվի հասուն այդ սիրելի ժողովուրդների բարոյության», – հայտարարել է Կաթոլիկ եկեղեցու հովվապետը՝ կիրակնօրյա պատարագի ժամանակ:



ՌԴ անվտանգության խորհրդի մշտական անդամները՝ Նախագահի հետ միասին, բննարկել են հայ-ադրբեջանական սահմանում տիրող իրավիճակը

ՌԴ Նախագահ Վլադիմիր Պուտինը տեսակոնֆերանս է անցկացրել ՌԴ անվտանգության խորհրդի անդամների հետ: Ինչպես հաղորդում է ՌԴ ղեկավարի պաշտոնական կայք էջը, տեղի է ունեցել մտքերի մանրամասն փոխանակում հայ-ադրբեջանական սահմանին տիրող իրավիճակի վերաբերյալ: Խիստ անհանգստություն է հայտնվել շարունակվող եսկայացիայի կապակցությամբ, ընդգծվել է կողմերի հրադադարի ռեժիմի ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաեւ միջնորդության պատրաստակամությունը:

Չայաստանը մասնակցել է Ռաշնության խորհրդի Նախագահ Վալենտինա Մատվիենկոյին, Պետդոմայի Նախագահ Վյաչեսլավ Վուլոյին, Անվտանգության խորհրդի Նախագահի տեղակալ Դմիտրի Մեդվեդեւը, Նախագահի աշխատակազմի ղեկավար Անտոն Վայսն, Անվտանգության խորհրդի բարտուղար Նիկոլայ Պատրուշեւը, ՆԳ Նախարար Վլադիմիր Կոլոկոցեւը, Արտաքին գործերի Նախարար Սերգեյ Լավրովը, Անվտանգության Ռաշնային ծառայության տնօրեն Ալեքսանդր Բորտնիկովը, Արտաքին հետախուզության ծառայության տնօրեն Սերգեյ Նարիշկինը եւ շրջակա միջավայրի պաշտպանության, բնապահպանության եւ տրանսպորտի հարցերով Նախագահի հատուկ բանազնաց Սերգեյ Իվանովը:



Ընդդեմ Ադրբեջանի սատարել Չայաստանին՝ նշանակում է սատարել ապրելու իրավունքը. Ֆրանսիայի խորհրդարանի բոլոր խմբակցությունների հայտարարությունը

Ֆրանսիայի խորհրդարանի բոլոր խմբակցությունների ներկայացուցիչները համատեղ հայտարարություն են տարածել Չայաստանի սահմանին Ադրբեջանական զինուժի սարքավորումները հետեւանքով առաջացած լարվածությունը վերաբերյալ:

Ընդդեմ Ադրբեջանի սատարել Չայաստանին՝ նշանակում է սատարել ապրելու իրավունքը.

Մենք՝ խորհրդարանի բոլոր խմբակցությունները ներկայացնող ֆրանսիացի խորհրդարանականներս, մեր խորը մտահոգությունն ենք հայտնում Չայաստանի եւ Ադրբեջանի միջեւ վերսկսված թշնամական գործողությունների կապակցությամբ: Երկու երկրների հյուսիսային սահմաններին հուլիսի 13-ից սկսված փոխադարձ հրետակոծություններն արդեն արժեցել են մեկ տասնակ մահեր, ինչն արդեն-իսկ չափազանց շատ է:

Սուկ դատապարտել այս բախումները՝ առանց մեղադրելու դրանց պատասխանատուներին, կնշանակի չասել ոչինչ:

Մենք բոլորս գիտենք, որ բախումների վերսկսումն ուղղակի հետեւանք է Ադրբեջանի բռնակալ Իլհամ Ալիեւի ցանկացած եւ վարվող լարվածության սրման ռազմավարության:

Պատերազմը հարմար սողանք, խուճափելու միջոց է նրա համար, ով ցանկանում է շեղել իր ժողովրդի ուշադրությունն այն ստորացումներից, որոնք հենց ինքը է պարտադրել: Իհմարար ազատությունների գրկում, կաշառակերություն, հովանավորչություն են թալան:

Տարիներ ի վեր, բացահայտորեն առաջ մղելով հայալուսաց դաստիարակությունը, ներկայումս, Ադրբեջանի Նախագահի համար շատ հարմար է ուղղորդել իր ժողովրդի հիասթափությունները՝ անհավասարակալ եւ անարդար լինելով, դեպի ժառանգական թշնամի նշանակված հարեան ժողովուրդը:

Այս առումով, իրավիճակն էլ ավելի է բարդացել թավշյա հեղափոխությունից հետո, երբ Չայաստանն իր տնտեսական առաջընթացի համար հիմնվում է իրավական պետության ամրապնդման եւ բարձր տեխնոլոգիայի զարգացման վրա, մինչդեռ Ադրբեջանը մսխում է իր էներգիկների ռեսուրսները, ինչը վտանգում է նրա էկոլոգիական ապագան: Ավելին, ուղղակիորեն Չայաստանի տարածքը թիրախավորող այս նոր ադրբեջանական

ագրեսիան ցույց է տալիս, որ Լեռնային Ղարաբաղը սոսկ պատճառ է ադրբեջանական վարչակարգի համար: Չայաստանը ներկայացնելով որպես «Արեւմտյան Ադրբեջան»՝ Ադրբեջանի բուն նպատակը տարածաշրջանում հայկական ներկայության իսպառ վերացումն է, այսպիսով ձգտելով ավարտին հասցնելու ավելի քան մեկդարյա ցեղասպանությունը:

Այս առումով, մենք խստորեն դատապարտում ենք ադրբեջանական ռազմատենչ ձեռնարկումներին Թուրքիայի ցուցաբերած հանցավոր աջակցությունը: Անընդունելի է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ երկիրը, որը կոչված է նպաստելու Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ հակամարտության կարգավորմանը եւ տարածաշրջանային համերաշխության հաստատմանը, ընդհակառակը, էլ ավելի է բարդացնում իրավիճակը՝ յուր լցնելով կրակի վրա: Ինչպես Ալիեւի, այնպես էլ Երողյանի քայլերը, նպատակ ունենալով կանխելու արտաքին ռազմական ավանտյուրաների հետեւանքով ժողովրդականության անկումը, ապակայունացնում են ողջ տարածաշրջանը:

Կիպրոսի եւ Սիրիայի հյուսիսի ռազմական օկուպացիայից, Լիբիայում կոպիտ միջամտությունից հետո, Թուրքիայի վտանգավոր ներգրավվածությունը Չարավային Կովկասում նոր վտանգ է տարածաշրջանային խաղաղության համար, եւ ըստ այդմ նոր եւ ուղղակի ոտնձգությունն Ֆրանսիայի եւ Եվրոպական միության շահերի դեմ:

Չհանդուրժելով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության արժեքների նման կոպիտ ոտնահարումը՝ մենք կոչ ենք անում կառավարությանը (ֆրանսիական) ձեռք առնել տվյալ իրավիճակից բխող քաղաքական եւ գործուն միջոցներ:

Ներկա պարագայում, մենք չենք վարանում անելու, որ ընդդեմ Ադրբեջանի սատարել Չայաստանին՝ նշանակում է սատարել ապրելու իրավունքը:

- Բենար Ֆուրնիե – սենատոր,
- Դանիել Կազարյան – պատգամավոր,
- Ֆրանսուա Պուպպոնի – պատգամավոր, Ֆրանսուա-Միշել Լամբեր – պատգամավոր,
- Գիյոմ Կասթայան – պատգամավոր,
- Գի Տեյե – պատգամավոր
- Ժան-Միշել Միս – պատգամավոր, Ժան-Պիեռ Կյուբերտաֆոն – պատգամավոր, Միշել Ամիել – սենատոր,
- Սոֆիա Կրիմի – պատգամավոր,
- Վալերի Բուայե – պատգամավոր,- նշված է հայտարարության մեջ:



ԱՄՆ կոնգրեսականներն իրենց զորակցությունն են հայտնել Չայաստանին ու հայ ժողովրդին

ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերի հանձնախմբի համանախագահ Ֆրենք Փըլոնը եւ Սենատոր Էդվարդ Մարքին իրենց զորակցությունն են հայտնել Չայաստանին եւ հայ ժողովրդին՝ դատապարտելով Ադրբեջանի կոնֆլիկտը հրահրող սադրիչ գործողությունները:

«Ադրբեջանը հերթական անգամ փորձում է պատերազմ սկսել Չայաստանի հետ: Ադրբեջանի կողմից Չայաստանի ու Արցախի դեմ մշտապես թեժ հռետորաբանություն կիրառելը եւս մեկ կոնֆլիկտ հրահրելու համաձայնեցված քանքերի մաս է», – «Թվիթեր»-ի իր միկրոբլոգում գրել է Ֆրենք Փըլոնը:

Էդվարդ Մարքին նույնպես «Թվիթեր»-ի իր միկրոբլոգում կատարած գրառմամբ աջակցություն է հայտնել Չայաստանին:

«Ես կանգնած եմ Չայաստանի կողքին, քանի որ այն պաշտպանում է իր տարածքային ամբողջականությունը: Ադրբեջանն ու Թուրքիան պետք է հարգեն հայ-ադրբեջանական սահմանը, պետք է հարգեն Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ձգտումները եւ պետք է անմիջապես վերջ տան կոնֆլիկտին», – նշել է նա:



ԱՄՆ-ը դատապարտում է բռնությունը հայ-ադրբեջանական սահմանին, կոչ անում պահպանել հրադադարը

Միացյալ Նահանգները խստագույն դատապարտում է բռնությունը Չայաստանի եւ Ադրբեջանի միջազգային սահմանին, հայտարարել է ԱՄՆ Պետքարտուղարության խոսնակ Սորգան Օրթագուրը:

«Չորրորդում ենք կողմերին անմիջապես դադարեցնել ուժի կիրառումը, օգտագործել իրենց միջեւ գոյություն ունեցող հարդրակցության ուղղակի միջոցները՝ խուճափելու համար հետագա եսկայացիայից, եւ խստորեն պահպանել հրադադարը», – ասված է Օրթագուրի հայտարարությունում, որը հրապարակված է Պետդեպարտամենտի պաշտոնական կայքէջում:

Որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ՝ Միացյալ Նահանգները հանձնառու է մտնում Լեռնային Ղարաբաղի հակամարտության երկարատեւ, խաղաղ կարգավորման հասնելու գործում կողմերին օգնելուն: «Մենք կշարունակենք ակտիվորեն

ներգրավված մնալ այդ նպատակին հասնելու ջանքերում», – շեշտում է Օրթագուրը:

Միացյալ Նահանգները միանում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին՝ կոչ անելով կողմերին հնարավորինս շուտ վերսկսել առարկայական բանակցությունները եւ ընդգծելով տարածաշրջան ԵԱՀԿ դիտորդների վերադառնալու կարեւորությունը, որքան արագ հանգամանքները դա թույլ կտան, նաեւ նշում է Պետդեպարտամենտի խոսնակը:



«Հաարատ Կապան» ՓԲԸ գլխավոր տնօրեն Դավիթ Թովմասյանի շնորհավորանքը Հանքագործի եւ մետալուրգի օրվա առթիվ



Սիրելի գործընկերներ
Հուլիսի 19-ը հանրապետության արդյունաբերության, տնտեսության զարգացման մեջ մեծ ավանդ է և ներդրում ունեցող աշխատողների մասնագիտական տոնն է: Հանքարդյունաբերությունը Հայաստանի զարգացող տնտեսության հիմնասյուններից է, որի ամրությունն ու կայունությունը նաեւ ձեզ կից է կախված:
Հանքագործի եւ մետալուրգի օրվա առթիվ շնորհավորում եմ բոլորիդ, ովքեր աշխատակիցներին, մասնագետներին եւ լեռնագործի պատվավոր ուղիով անցած վետերաններին:

Պատվելի լեռնագործներ
Ձեր կատարած աշխատանքն անգնահատելի է, կյանքի համար անհրաժեշտ ու միշտ պահանջարկ ունեցող: Ձեր բրտաջան աշխատանքի պարգևը երկրի տնտեսական զարգացումն է, մեր սիրելի Կապան համայնքի օրեցօր բարեկարգվող տեսքը, մեր համաքաղաքացիների խնդիրներին սատար կանգնելը:
Ընդունեք իմ անկեղծ երախտագիտությունը ձեր աշխատանքի բարձր կատարողականի, ընկերության գործունեության բնականոն ընթացքի, այն շնորհի համար, որը դուք կրում եք ամեն օր՝ արդյունաբերությունում աշխատելիս:
Վստահ եմ, որ ձեր մասնագիտական բարձր կարողությունների շնորհիվ հետագայում ես հաջողությամբ կիրականացնեմ մեր առջև դրված խնդիրներն ու կկատարեմ երկրի կայուն զարգացմանը:
Մաղթում եմ ձեզ աշխատանքային հետագա հաջողություններ, առողջություն եւ ընտանեկան ջերմություն:
Հպարտորեն կրեք հանքագործի կոչումը եւ սիրեք ձեր աշխատանքը: //

«ԳեոՊրոՄայնինգ» ընկերության նախագահը շնորհավորում է աշխատակիցներին՝ մասնագիտական տոնի կապակցությամբ



Մետաղագործի օրն ամենամյա մասնագիտական տոն է, որ նշվում է հուլիսի երրորդ կիրակի օրը: Մասնագիտական տոնի առթիվ «ԳեոՊրոՄայնինգ» ընկերության նախագահ Ռոման Խուդոլինի իր ավանդական շնորհավորական խոսքն է հղել ընկերության աշխատակիցներին:

Հարգելի գործընկերներ
Շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ մետաղագործի օրվա առթիվ: Մետաղագործությունը դիմամիկ զարգացող ճյուղ է եւ երկրի տնտեսության զարգացման հիմնասյուններից մեկը: Մետաղագործական համակարգակազմիչ ձեռնարկություններն աշխատանք եւ արժանապատիվ ապրելու հնարավորություն են ապահովում միլիոնավոր մարդկանց համար ամբողջ աշխարհում: Երկրի բարգավաճումից մեծապես կախված է ամբողջ երկրի բարեկեցությունը: Ես վստահ եմ, որ մեր ձեռնարկությունների աշխատանքային կոլեկտիվները, շարունակելով փառահեղ ավանդույթները, նոր ձեռքբերումներով իրենց ներդրումն են բերում Հայաստանի տնտեսության զարգացման գործում:

Ուրախալի է, որ ձայած ճգնաժամային դժվարություններին, մեր ակտիվները շարունակում են կայուն աշխատել, կատարել բյուջետային եւ սոցիալական բոլոր պարտավորությունները եւ, ամենակարեւորը, իրականացնել երկարաժամկետ զարգացման ռազմավարությունը:
Այսօր ամբողջ աշխարհը կրկին ծանր ժամանակներ է ապրում՝ փոփոխվելով համաճարակի ազդեցության ներքո: Մենք հրաժարվում ենք առօրեական սովորույթներից եւ սովորում ենք անվտանգության նոր կանոններ: Եվ մենք հավատում ենք, որ կյանքը կվերադառնա իր սովորական ընթացքին: Մենք կրկին կողջունենք մեր գործընկերներին ձեռքբերված, միասին կենսակրթելու հաջողությունները եւ նոր ծրագրերի իրականացման հնարավորությունները:
Մաղթում եմ ձեզ նորանոր հաջողություններ, հարգելի հանքագործներ եւ մետաղագործներ:
Ամբողջ սրտով մաղթում եմ ձեզ եւ Ձեր ընտանիքներին բաջառողջություն, ընտանեկան ջերմություն եւ բարեկեցություն:
Հ.Գ. «ԳեոՊրոՄայնինգ» ընկերությունը հիմնադրվել է 2001 թվականին, որը ոսկու եւ այլ մետաղների դիվերսիֆիկացված ձեռնարկային բազա ունեցող միջազգային մասնավոր ընկերություն է: «ԳեոՊրոՄայնինգ»-ի ակտիվները գտնվում են Ռուսաստանում եւ Հայաստանում: Հայաստանում «ԳեոՊրոՄայնինգ»-ին են պատկանում երկու ձեռնարկություն՝ Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը / ԱՂՄԿ / եւ «ԳեոՊրոՄայնինգ գոլդ» ընկերությունը, որը շահագործում է Սոթքի ոսկու հանքը եւ Արարատի ոսկու կորգման ֆաբրիկան: //

Նարեկ Սարգսյանը գերի է ադրբեջանցիների ձեռքում



Օրերս տեղեկություն էր տարածվել, որ Սյունիքի մարզի բնակիչ Սարգսյան Նարեկն անհետ կորել է: Մի քանի օր շարունակ ԱԽ-ը որոնողական լայնածավալ աշխատանքներ իրականացրեց, որն անարդյունք եղավ:

Այդ ընթացքում ադրբեջանական լրատվամիջոցները հրապարակել են տեսանյութ, որից հասկանալի է դառնում, որ Նարեկ Սարգսյանը գտնվում է Ադրբեջանի Հանրապետության տարածքում:
Տեսանյութից ակնհայտ է, որ այդ երկրի հատուկ ծառայությունները ստիպել են երիտասարդին խոսել Հայաստանի դեմ:

Հուլիսի 9-ից անհետ կորած՝ Ներքին նախարարի բնակիչ որոնողական աշխատանքներն ավարտվել են անարդյունք:
Հուլիսի 14-ին, ժամը 10:25-ին բաղաձայնող որոնողական աշխատանքները վերսկսելու նպատակով դեպի վայր է մեկնել ԱԽ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը:
Ժամը 18:05-ին որոնողական աշխատանքներն ավարտվել են անարդյունք:
Հիշեցնենք, որ հուլիսի 9-ին, ժամը 01:35-ին ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն տեղեկություն է ստացվել, որ Ներքին նախարարի թիվ 7 փողոցի տներից մեկի բնակիչ Նարեկ Ս.Ն (ծնված 1990 թ.) գնացել է Գորայք գյուղին հարակից արտավայր եւ չի վերադարձել. անհրաժեշտ է փրկարարների օգնություն:

Դեպքի վայր է մեկնել ԱԽ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը, այնուհետև՝ նաեւ հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ:
Որոնողական աշխատանքներին ներգրավվել են ոստիկանության Սիսիանի բաժնի աշխատակիցները:
Քաղաքացու շուրջ հինգ օր տեսած որոնողական աշխատանքներն ավարտվել են անարդյունք:

ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆ. «Ներքին նախարարից գյուղից անհետացած ՀՀ քաղաքացու հարցով դիմել եմ Կարմիր խաչին»
«Ներքին նախարարից գյուղից անհետացած ՀՀ քաղաքացու հարցով դիմել եմ Կարմիր խաչին», – հայտարարել է Մարդու իրավունքների պաշտպան (ՄԻՊ) Արման Թաթոյանը:
«Կարմիր խաչի հայկական պատվիրակության ղեկավարն ինձ ասաց, որ իրենք բացել են գործ, նախաձեռնել են հատուկ գործընթաց եւ դիմել են համապատասխան հարցմամբ Ադրբեջանի Կարմիր խաչի պատվիրակությանը եւ դեռ չունեն պատասխան», – նշեց Թաթոյանը:
Մարդու իրավունքների պաշտպանը

հայտնեց նաեւ՝ որ «Կարմիր խաչը մեզ տեղեկացրել է, որ դեռ իրենք պաշտոնական հաստատում չունեն, մենք կապի մեջ կլինեմք միջազգային մեր գործընկերների հետ՝ մարդու իրավունքների պաշտպանի իրավասության սահմաններում: Ես նաեւ քննարկել եմ մի շարք այլ հարցեր, որոնց թվում էր նաեւ այնտեղ ազատագրման դատապարտված մեր մյուս հայրենակիցներին «...», մանրամասներն այս պահին չեմ կարող հրապարակել: Մենք կապի մեջ ենք նաեւ Ներքին նախարարի անհետացած եւ Ադրբեջանի տարածքում հայտնված մեր քաղաքացու ազգականների հետ»:

Պաշտոնական Բաբուն հայտարարում է, թե Հայաստանի 30-ամյա քաղաքացի Նարեկ Սարգսյանն ինքնակամ հատել է սահմանն ու անցել Նախիջեանի հիթնավար Հանրապետության տարածք:
Տեղի հեռուստաընկերությունը ցուցադրել է Սարգսյանի հետ հարցազրույց՝ պնդելով, թե նա խնդրել է իրեն Ադրբեջանի քաղաքացիություն տրամադրել:

ՄԻՊ-ը Նարեկ Սարգսյանի հարցով կրկին խոսել է ԿԻՄԿ-ի հայաստանյան պատվիրակության ղեկավարի հետ

Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանն Ադրբեջանում հայտնված Նարեկ Սարգսյանի հարցով կրկին խոսել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ICRC) հայաստանյան պատվիրակության ղեկավար Զլեր Մեյթրոյի հետ:
«Հաշվի առնելով Կարմիր խաչի միջազգային կոմիտեի մանդատը, ինչպես նաեւ հայաստանյան պատվիրակության ղեկավարի հետ պայմանավորվածությունը՝ մանրամասներ ներկայացնել չեմ կարող, սակայն մենք կշարունակենք կապ պահպանել Կարմիր խաչի միջազգային կոմիտեի մեր գործընկերների հետ:

Բացի այդ, ինչպես ես անձամբ, այնպես էլ իմ իրավասու ներկայացուցիչը մշտական կապի մեջ ենք նաեւ Նարեկ Սարգսյանի ընտանիքի հետ», – «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ «Ֆեյսբուք»-ի ի էջում գրել է Թաթոյանը:

Ձեռնարկվում են համապատասխան միջոցներ՝ Նարեկ Սարգսյանին ՀՀ վերադարձնելու ուղղությամբ ԱԱԾ

2020 թ. հուլիսի 8-ին՝ ժամը 11:00-12:00-ի սահմաններում, ԱՀ Նախիջեանի հիթնավար Հանրապետության հետ սահմանակից ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքի վարչական տարածքի արտավայրերում սեփական անասուններն արածացնելիս անհետ կորել է Սյունիքի մարզի Ներքին նախարարի գյուղի բնակիչ, 1990 թ. ծնված, ՀՀ քաղաքացի Նարեկ Սարգսյանը: Պարզվել է, որ Ն.Սարգսյանը կորած անասունները որոնելու արդյունքում մոլորվել է անցել է ԱՀ Նախիջեանի տարածք, որտեղ գերեզմանավորվել է:
Ն.Սարգսյանը բնութագրվում է որպես հայրենասեր, հանգիստ եւ աշխատասեր անձնավորություն, տեղական ինքնակառավարման եւ իրավապահ մարմինների հետ երբեմնե խնդիրներ չի ունեցել: Ն.Սարգսյանն ունի ընտանիք եւ անչափահաս երեխաներ, որոնց հոգսերը հոգում է ինքը:
Ներկայումս ձեռնարկվում են համապատասխան միջոցներ՝ Նարեկ Սարգսյանին ՀՀ վերադարձնելու ուղղությամբ: //

Այոնիքը՝ դիցարան

Սերգեյ Ումարյանի համանուն գրքից (Երեւան, 1981թ. «Հայաստան» հրատարակչություն)՝ հատվածներ

Սկիզբը՝ N 15 (531)-ում

Միևնիք եւ Միսական անուններին հանդիպում ենք V դարի «Գահնամակ» եւ «Չորանամակ» կարեւորագույն փաստաթղթերում: Այսպէս. «...տոյնպէս Ներսէի հրամանաւ արքայից արքայի եւ եւս (Սա)հակ հայոց կայսրոյնու կնքեցա՞վ զԳահնամակին եւ եղաք մատանի զարքայից արքայի եւ զՆերս. եւ է այսպէս արդար եւ ճշմարիտ: Առաջին իշխան հայոց եւ Մարիազն ա. Միւնեաց տեր»⁽¹²⁾:

«Գահնամակի» մի այլ տարբերակում (4-րդ դար, հարմարվել է «Կեղծ գահնամակ») կա «Միսանեք» անունը: Իսկ «Չորանամակ»-ում, որը պատկերացում է տալիս Հայաստանի այն ժամանակվա զինված ուժերի մասին, արեւելյան սահմանները պաշտպանող 21 նախարարություններից առաջինը «Միւնին» է: Արդնցը կարելու վկայություններ է համարել եկեղեցական արձանագրությունները, որոնցում Արտաշատի 451 եւ Դվինի 505 թվականների կրոնական ժողովներում նշված է «Միւնեաց» անունը:

Հայ մատենագրությունը Միւնի եւ Միսական անունների մասին ավելի շատ տեղեկություններ է տալիս, քան օտար աղբյուրները: Եվ վերջ բերած բոլոր օրինակները ապացուցում են Միւնի եւ Միսական անունների գուգահեռաբար օգտագործումը հայոց մեջ, ուստի ասել, թէ Միւնին ավելի հին անուն է, քան Միսականը, ճիշտ չէ:

Խնդրո առարկայի մասին խոսել է նաեւ Լ. Մառը: Միւնի անվան մեջ նա si հիմքը համարել է էթնիկական ծագում ու քննադատել է Հ. Զյուրբմանին, որ, իրոք, նա Միսական անունը դրել է պրոկուրսոյան մասնատման մեջ, այն բաժանելով սիս հիմքի եւ ական պարսկական հոգնակի ածանցի: Ինքը՝ Մառը այդ անունը համարել է նախարարական, արմատապէս հաբեթական ծագում ունեցող: Եւր կարծիքով Միւնի եւ Միսական անունները նույն մարզի երկու տարբեր անուններ են, որոնց հիմքը՝ si-ն հաբեթական լեզվով կոչվում է «երկինք», եւ նրա կոսմիկական կապը կա «ծով» եւ «ջուր» իմաստի մեջ: Իսկ sak նույնպէս հաբեթական ծագումով նշանակում է «որդի», որը ցեղային անուն է:

Սակայն շուտով Մառը հրաժարվում է իր նախկին տեսակետից, որովհետեւ հարցին մոտեցել էր ձեւաբանական - համեմատական մեթոդով, որի համար էլ գրել է. «...Самое название скифов, в первую очередь общераспространенное греческое, давно уже разъяснено яфетидологически, но разъяснение то, данное четыре года тому назад было сделано нами тогда, когда к анализу мы подходили с одним формальным сравнительным методом. Тогда мы учитывали один морфологические признаки, без палеонтологии и без разложения на первичные элементы»⁽¹³⁾:

Լ. Մառը այս անգամ ինքն է Միսական անունը դնում պրոկուրսոյան մահճի մեջ, երկրիս անունը (Պ. դը Լազարդի նման) բաժանելով si եւ sak վանկերի եւ ամեն մի վանկ (հիմք) ընդունելով որպէս ցեղանուն, դրանք հարմարեցնում է իր քառասարկ էլեմենտների տեսությամբ:

Նշանավոր կովկասագետի այդ տեսակետը ընդունել է նաեւ Արարատ Դարիցյանը, որը Մյունիքի գրեթէ բոլոր գավառանունները համարել է ցեղանուններ⁽¹⁴⁾: Այնուհետեւ, այդ տեսակետը պաշտպանել է Գրիգոր Ղափանցյանը. «saka» (սկյութացի) բառը դեռ հայկական շրջանում անգամ մնացել է իր



էթնիկական ծագումով. համեմատել մեր «zok»-երին, մեր Շակաշեն (Saksen) եւ նման անուններով⁽¹⁵⁾:

Հարցի գիտական պատասխանն այն է, որ երկու կամ մի քանի ցեղերի միաձուլման դեպքում հարթորը միայն մեկն է լինում, մեկի լեզուն, մյուս ցեղերն անհետանում են, չնայած նրանք հաղթողի մշակույթի մեջ կարող են մուծել կենցաղային սովորույթների, նիստուկացի, հավատալիքների եւ լեզվական մասնակի տարրեր: Ուժացվող ցեղը ամենից առաջ կորցնում է իր լեզուն:

Պատմությունը չգիտի մի այնպիսի լեզու, որ առաջացած լինի տարբեր ցեղերի լեզուների խառնուրդից: Իսկ լեզուն ժողովրդի գլխավոր հատկանիշն է... Կարծում ենք, դա վերաբերում է նաեւ Միսական անվանը. այն չէր կարող ծագած լինել հյուսիսից գաղթած սակ եւ տեղաբնիկ սի ցեղանունների միաձուլումից:

Մեզ հայտնի է, որ, երբ հնդիրանական ցեղախմբերը տիրապետեցին Էլամի տերիտորիան, տեղում, ի վերջո, հաղթեց իրանական լեզուն: Իսկ երբ իսպանացիները տեղափոխվեցին Հարավային Ամերիկա, ապա անգլիացիները՝ Հյուսիսային Ամերիկա, պատմության ասպարեզից վերացան հնագույն մշակույթ ունեցող տեղաբնիկ մայաները, արտեզական մշակույթը հնդկացիների շատ ու շատ ցեղեր, բայց մայր ցամաքում հաղթեցին իսպաներեն եւ անգլերեն լեզուները:

Ֆ.Ենգելը իր «Ֆրանկյան բարբառը» աշխատության մեջ նշել է, որ ժամանակակից Գերմանիայի տարածքում ապրել է երեք ռասա՝ Եսկիմոսներ, բասկեր եւ արիացի կիմերներ, որից հետո երեւան եկան նոր գերմանական ցեղերը՝ գոտտոները, ինդեփոները, գերմոնները եւ ուրիշներ: Այնուհետեւ, վերոհիշյալ ռասային պատկանող ցեղերը տեղաշարժվել են ուրիշ վայրեր, իսկ մնացածները ծովով են գերմանական բարբառների մեջ: Իսկ բարբառը «հանդիսանում է ցեղի լեզու, որ բարբառների առաջացումը եւ զարգացումը պետք է որոնել ցեղերի կոնկրետ պատմության մեջ»⁽¹⁶⁾:

Տվյալ դեպքում Մյունիքի պատմությունը պետք է կապել Մյունիքի տարածքային առանձնահատկության, նրա ներքին արյունակցական ցեղային միավորման, տնտեսական փոխհարաբերությունների, հարեւան ցեղակից բնակիչների հետ հոգեւոր եւ մշակույթային փոխազդեցությունների իրական պատմության հետ:

Որ սակերը հյուսիսից հարավ են արշավել՝ ճիշտ է: Որ Արվանքի Շակաշեն գյուղատունը նման է սակ անվանը, այդ էլ ճիշտ է: Բայց դրանք հիմք չեն տալիս մեզ, որ Միսական անվան մեջ որոնենք սակ ցեղանունը, երբ ամբողջ տարածքում «սակ» հիմքով տեղանուն չկա:

Ստրաբոնի այն կարծիքը, թէ սակասենե (Շակաշեն) անունը ծագում է սակ ցեղանունից, մի քանի գիտնականների թյուրիմացությունների տեղիք է տվել: Տեղանվան սիսայ ստուգաբանության մասին է խոսել անվանի հայագետ Հ. Աճառյանը. «Հայաստանում կա մի գավառ, որ կոչվում է Շակաշեն, պարզ է, որ այս բառը կազմված է շեն, շինել արմատից՝ շակ՝ բառով: Բայց ի՞նչ է այս շակը: Ստրաբոնը դեռ I դարում (մ.թ.ա.) այս բառը մեկնում է սակ կամ շակ ազգի անունից... Այս ստուգաբանությունը շատ լավ է եւ ընդունված է մեզանում: Բայց հայերեն շեն իրանյան փոխառություն է (պահլավերեն

sen, սողիներեն sen) եւ նրա հնությունը գնում է մինչեւ I դար (տե՛ս իմ հայոց լեզվի պատմություն, I, 236). մինչդեռ սակերի կամ շակերի արշավանքները գնում են մ.թ.ա. IV, VI, VIII դարը: Այս երկուսը ինչպե՛ս պետք է հաշտեցնել իրար հետ»⁽¹⁷⁾:

Ճիշտ է անվանի հայագետի կարծիքը: Եթէ սակերը եկել է բնակություն են հաստատել նշված վայրում, ապա նախ եւ առաջ այդ տեղանունը պետք է կոչվեր սակերեն լեզվով, թէ իմաստով եւ թէ տեղանվանը հատուկ սակերեն հոգնակի կազմությամբ:

Մենք գտնում ենք, որ Շակաշեն գյուղանվան հիմքում ոչ թէ սակ ցեղանունն է, այլ փոքրասիական «սրբազան» կամ «ծիսական» բառը: Սազալասոս քաղաք կար Փոքր Ասիայում, որի ճիշտ ծագումը տալիս է բուլղարացի գիտնական Վ. Գերոզիեւը: «Zayayaoos, oi, город в Пизидии, вероятно – лув, sakla (i) ssa, производному от (xet) saklai -- «обычай, ритуалы ср. лат. sacer «святой, посвященный»: Այնուհետեւ, գիտնականը բերում է նաեւ Ետրուսկերեն նույն բովանդակությունն ունեցող sakni բառը⁽¹⁸⁾:

Լ. Արդնցը սխալ է գտնում Մարկվարտի այն կարծիքը, թէ Սակասիայի եւ ta oakaia բառի միջեւ ընդհանրություն կա: Բայց ճիշտ է, որ սակասիա նշանակում է տոնակատարության նվեր, սակայն սակ ցեղանվան հետ չի առնչվում⁽¹⁹⁾:

Մենք գտնում ենք, որ Մարկվարտը ճիշտ էր, այդ տոնակատարության նվիրատվությունը կապված է եղել ինչ-որ ծեսի հետ:

Շակաշեն անունը ինթեթական saklai բառից է, որը նշանակում է «սրբավայր» կամ «ծիսավայր», էլ չենք խոսում, որ հենց աշուրերեն massaku նշանակում է «աստծու տուն», որ բաբելոնյան E sagila - տաճար բառն է: Այստեղից էլ առաջացել է Աշուրի sangu «մեծ բուրմ» անունը:

Միսական անվան վանկային Միս-ակ-ան բաժանումը սխալ է: Երկրանվան հիմքը ճիշտ է կրահել անվանի հայագետ Հ. Զյուրբմանը, Միսական անունը բաժանելով «sis (ses?)» հիմքի եւ akan հոգնակի մասնիկի, չնայած sis-ը նա եմբարդել է պարսկական, բայց թէ ի՞նչ էր դրա նշանակությունը, չի բացատրել:

Sis արմատը հնագույն կենսագրություն ունի, որը գոյություն է ունեցել պատմության ասպարեզից վերացած լեզուներում, եւ այն, մեր կարծիքով, նշանակում է ծես-զոհ: Այս բառը փոխ են առել նաեւ վրացիները՝ ծեսի,

բաղաբի համար»⁽²²⁾:

Արձանագրության գաղափարագիր սմս Siskur բառը Գ. Մելիքիչվիլիս թարգմանում է «жертва», «жертвенное животное».

Այսպիսով, եթէ Siskur -ը թարգմանենք արդիական իմաստով, կստացվի «զոհակենդանի»: Գաղափարագրի արմատը մենք գտնում ենք, որ ծես - զոհ բառն է: Այդ բառն այնքան հին է, որ դժվար է կրահել, թէ այն սկզբնապես որ ժողովրդին է եղել: Բոլոր դեպքերում sis հիմքը փոքրասիական է, որտեղից էլ մտել է նորիստեղիների մեջ:

Մենք հետո կտեսնենք, որ ծես բառը գոյություն է ունեցել Փոքր Ասիայի հնագույն ժողովուրդների լեզուներում, դրանցից է անցել հայերին եւ վրացիներին: Նշված (զոհաբերություն) բառը բրդերենում տառադարձվել է «շինբրը», որը նշանակում է «ողբ» կամ «սեւ հագնել եւ ողբալ»: Այս բառը հնագույն ժամանակներում նշանակել է ողբալ, կոծել զոհի վրա:

Այժմ տեսնենք, թէ սիս արմատը հնագույն ժողովուրդների լեզուներում «զոհ» կամ «ծես» բովանդակությամբ ինչպիսի կիրառություններ է ունեցել:

Հերոդոտը գրում է, որ հունական Հեստիա աստվածուհու անունը բարբարոսական ծագում ունի, եւ առիաստարակ հունական բոլոր աստվածների անունները փոխառություն են: Բերենք նրա խոսքերը. «Α το, что эти имена варварского происхождения, как я полагаю скорее всего – египетского, это я точно установил из расспросов»⁽²³⁾:

Չգիտենք, թէ Հերոդոտը ինչ հեղինակավոր մարդկանցից է հարցուփործել, բայց իր եկթադրություններն էլ ավելի համոզիչ դարձնելու համար, գրում է, թէ այդ հենց իրենք՝ եգիպտացիներն են հաստատում:

Гестии, Фимиды, Харит и Нерейд, имена всех прочиях эллинских богов издревне были известны египтянам. Я повторяю лишь утверждение самых египтян»⁽²⁴⁾:

Անշուշտ, եգիպտացիներից հին հույները շատ փոխառություններ են արել, որոնց թվում նաեւ աստվածանուններ, բայց բոլոր չէ, որ եգիպտացիներն են տվել: Հույները շատ բան են սովորել նաեւ փոքրասիական կուլտուրական հին ժողովուրդներից: Հենց Հեստիա աստվածուհու անունը եւ զոհաճաշը՝ sisisi-ն փոքրասիական ծագում ունեն: Հերոդոտը հաստատում է, որ սիսիտին կապված է եղել



Խնդրո առարկայի մասին խոսել է նաեւ Լ. Մառը: Միւնի անվան մեջ նա si հիմքը համարել է էթնիկական ծագում ու քննադատել է Հ. Զյուրբմանին, որ, իրոք, նա Միսական անունը դրել է պրոկուրսոյան մասնատման մեջ, այն բաժանելով սիս հիմքի եւ ական պարսկական հոգնակի ածանցի:



որը նշանակում է կարգ, օրենք, հաստատել:

Ստ. Մալխասյանը իր «Հայոց լեզվի բացատրական բառարան»-ում այն միտքն է հայտնել, որ հայերենում ուրիշ ածանցներ չունեցող ծես բառը (ծիսի), որը նշանակում է «արարողություն», փոխառված է վրացերենից⁽²⁰⁾: Սա, իհարկե, ճիշտ լինել չի կարող, թէ հայերը եւ թէ վրացիները ծես բառը վերցրել են փոքրասիական ժողովուրդներից՝ ծես > sis (ծ > ս) հնչյունափոխությամբ, որի մասին հետո:

Sis արմատը, ծես հասկացությամբ, մենք տեսնում ենք նաեւ Վանի հին տերության թագավոր Ռուսա առաջինի (735 – 713, մ. թ. ա.) թողած Մուսասիրի արձանագրության մեջ⁽²¹⁾:

Վանի թագավորության մինչեւ այժմ հայտնի բոլոր արձանագրությունների մեջ sis (ծես) բառը հանդիպում ենք միայն Թոփուկավայի արձանագրության մեջ: Բարբախտաբար այդ արձանագրությունները երկլեզվյան են՝ նորիստեղիներ* եւ աշուրերեն: Այդ արձանագրության նորիստեղիներն տեսքով 22-րդ տողում գրված է այսպէս. (ստ SISKUR mes) za-du-u-bi NA-PHARU uRU ar-di-ni-e a-ru-u- (bi), որի բովանդակությունն է. «Բագում ոչխարներ նվիրաբերեցի եւ բոլորը զոհաբերեցի Արդինի

զոհաբերության ծիսակատարության հետ, որը օրինականացրել է Սպարտայի օրենսդիր Լիկուրգոսը (VIII դար մ. թ. ա.)»⁽²⁵⁾:

Հեստիա աստվածուհու եւ sisisiti-ի փոքրասիական ծագումը մասամբ հիմնավորել է Պլատոնը: Վերջինս գրում է. «Мне пришло в голову, что многие имена эллины заимствовали у варваров, особенно же те эллины, что живут под их властью»⁽²⁶⁾:

Բարբարոսներ ասելով, հակառակ Հերոդոտի, Պլատոնը նկատի ուներ ինթեթին, փյունզացիներին, լիդիացիներին, թերեւս նաեւ հայերին:

Պլատոնը խոսելով իդեալական պետության կառուցվածի մասին, իր «Օրենքներ» գրքում հարդորում է, որ ընտրյալ դասակարգի համար գոյություն է ունեցել համաճաշի կարգ՝ «sisiti»: Այդ նշանակում էր ընդհանուր սեղանից օգտվելու ծիսական այն սովորույթը, որը կիրառում էին դորիացիները՝ Կրետեում եւ Սպարտայում:

Սիսիտին՝ հնագույն ծիսական ճաշ, ընթրիք կամ հացկերույթ (ճաշադահիլճն) էր, նույնը, ինչ հայերի մեջ՝ զոհաճաշը կամ մատաղահացը: Հույները այդ բառը փոխ են առել փոքրասիական ժողովուրդներից: Մեր կարծիքն ավելի համոզիչ դարձնելու համար բերենք Սոկրատեսի երկախոսությունը զո-

հարերություն բառի մասին. ...«И ведь даже если посмотреть чужеземные имена, то и тогда можно не хуже определить, что каждое из них значит. Так и здесь: имя сущности вещей, которое мы произносим oysia, один произносят как essia, другие же как osia. Так вот прежде всего, исходя из второго звучания имени, есть основание называть Гестей сущность окружающих нас вещей. А с другой стороны, ведь и мы называем также место причастное существованию, глаголом <estin> (существует) и в таком случае этой богине правильно дано имя „Гестия»: и похоже, что в древности мы то же имя сущности произносили не oysia, но essia. А еще сопоставив это имя с названием жертвоприношения (thisia), ктонибудь мог бы счесть, что именно это имели в виду люди, установившие такое имя (ընդգծումը մերն է: - Ս. Ու.): Ведь вероятно, те, кто сущность всего называл этим именем - essia, прежде всей богов приносили жертвы Гестей»⁽²⁷⁾:

Սոկրատեսի միջոցով արտահայտված Պլատոնի այդ բացատրությունն ասում է այն մասին, որ հնագույն essia բառը հին հունական բարբառներում հնչել է տարբեր կերպ, չնայած բոլորի բովանդակությունը նույնն է եղել: Պլատոնը essia - եություն արտահայտող բառը, երբ համարում է thisia - զոհաբերություն բառի հետ, տեսնում է, որ երկուսի բովանդակությունը նույնն է: Այդ հիմքից է առաջացել մշտապես կրակի, օջախի եւ զոհաբերության աստվածուհու Յեստիա անունը, որին զոհ էին մատուցում բոլոր աստվածների առաջ:

Մենք գտնում ենք, որ հունարեն sesia - ն է, որի օրինակը դորիացիների sisiti զոհաճաշ բառն է: Յեստիայում հունարենի մեջ s>th հնչյունափոխությամբ sesia-ն դարձել է thisia-ն զոհաբերություն:

Յունարեն th հնչյունն ավելի մոտ է s-ին, քան հնդեվրոպական t- ին, որը հաճախ է փոխվում s հնչյունի, ինչպես Կիպրոսի հունական բարբառում tis - ատտիական բարբառի vis-ին(28): s-ն հունարենում փոխվելով է հնչյունի ses(ծես) բառն էլ տառադարձվել է vevuion-ծես, սրբազան սովորույթ⁽²⁹⁾:

Այսպիսով, փոքրասիական ծես-զոհ բառը պահպանվել է հայերենում ծես, վրացերենում ծեսի, իսկ նորիստիերեն լեզվում siskur գաղափարագրի մեջ, դորիական բարբառում sisis, դասական հունարենում sesia>essia>thisia>veuous բառերի մեջ, բոլորի արմատը՝ ծես-զոհ իմաստով: Սակայն ինչպե՞ս է առաջացել հունական զոհաբերության աստվածուհու Յեստիա անունը: Յայերենում, պարսկերենում եւ հունարենում բառակազմի s>h հնչյունափոխությունը օրինակաբար է, ուստի sisia (զոհել) բառի s հնչյունը փոխվելով h-ի, ապա միջին s-ի մոտ է ավելանալով, աստվածուհու անունը ստացվել է Յեստիա:

Վերոհիշյալ բոլոր օրինակները մեզ բերում են այն համոզման, որ Սիսական անվան հիմքը նույնպես sis-ն է, ակնհայտ հոգնակիով, որը նշանակում է ծիսարան կամ զոհարան, եւ այն բնավ չի նշանակում շինծու սի եւ սակ ցեղերի անունների գուճար: Ծես բառը սիս է արտասանվել Սյունիքի տեղաբնիկ հնագույն հայկական ցեղերի հորջորջմանը:

Յամոզված ենք, որ Սիսական անվան մյուս համագոր Սյունի անունը Սիսիունի անվան կրճատ ձևն է: Նորիստիերեն լեզվում գոյություն են ունեցել վանկերի եւ հնչյունների առնամանկային եւ տարմանություններ հետեւանքով առաջացող կորուստներ, ինչպես kuR dirguni—dirra (դիարբերիք) կամ tarsuatuhi-lu tatuhi (արիություն): Յնարավոր է, որ si մեկ վանկի այդպիսի կորուստ է տեղի ունեցել նախ նախնական Սիսիունի անվան մեջ, որի պատճառով էլ անունը դարձել է Սիսի: Եվ կամ նորիստիերեն sisisi-ի դիմաց հնուց ի վեր տեղանունը հայերենում հանդես է եկել Սիսի: Սյուն կողմից՝ Սիսիունի անվան համագորը պահպանվել է միևնույն մեր օրերը՝ Սիսիան տեղանվան մեջ⁽³⁰⁾:

Յոզնակի ունի մասնկտվ Սյունիքի տեղանուններն էին՝ Uelakuni կամ Uelakuhi (վեյակունի > Գեղարքունի), Giebuni (Կիսունի՝ Լճաշենում) եւ այլն:

Ըստ երեւոյթին, Սիսիունի > Սիսիան > Սիսական անունները միեւնույն անվան նորիստիերեն եւ մարզի հայերեն տարբերակներն են, որոնց մեջ անվանահիմք՝ sis- ը ծես-զոհ բառն է, ունի, ան եւ ական հոգնակի ածանցներով, ուստի տեղանվան իմաստը կնշանակի ծիսարան կամ զոհարան: Sis հիմքով տեղանուններ ունենք պատ-



Ն. Ադոնցը «Армения в эпоху Юстиниана» աշխատության մեջ բերել է Սյունիքի մասին եղած հայ եւ օտար աղբյուրներից տվյալներ: Ադոնցը վկայակոչել է ասորի հեղինակ Ջաքարիայի (VI դար) «Ժամանակագրություն» գիրքը, որտեղ ասված է. «Սիսական երկիրը իր լեզվով...»:



մական Յայաստանի տարածքում: Այսպես, Վանի թագավոր Ռուսա II-ի հիշատակած ՏԻս բնակավայրը Վանա լճից հարավ-արեւելք, Սիսական ի Կոտակը եւ նրա մեջ մտնող Սիսանձորը, Գուգարքում՝ Սիսիձորն ու Սիսիմարան, Կիլիկիայում՝ Սիս քաղաքը եւ այլն:

Բուզարիայում Սիստով ու Խորվաթիայում Սիսակ քաղաքանունները կապ չունեն մեր ասածների հետ, որովհետեւ դրանք Կելտերեն նշանակում են եղեգնուտ, իսկ հնդեվրոպական ծագումով՝ ջուր, sesri- հոսող-վազող: Sis հիմքով ունենք մի քանի ջրանուններ՝ Սեսարա՝ Վոլգայի ավազանի Դուբնա գետի վտակը, Լամա գետի վտակը, Դեսնա գետի վտակը, Վոլխովի վտակը, Բուգի վտակը, ստորին Վոլգայի Իրգիգի վտակը եւ այլն⁽³¹⁾:

Սակայն սիս արմատով տեղանուններն ավելի բնորոշ են Սիսական աշխարհին: Այս հանգամանքն էլ մատնանշում է նրա ծիսարան ընդհանուր անունը: Այդպիսիներից են՝ Սոթք գավառում՝ Սիսկայա (այժմ Շիշկայա) գյուղը, ճահուկ գավառում՝ Սես գյուղանունը, առանց ածանցման, Կովսական գավառում՝ Սիսկերտ (այժմ Շիշկերտ) գյուղը, Խուստուկի սարի հնագույն սրբավայր՝ Սիսբարը եւ Ծղուկի Սիսթափա (այժմ Շիշթափա) սարը:

Սիս արմատով ունեցել ենք նաեւ անձնանուններ: Սիսակ անունը եբրայացիների մոտ Շեշակ է: Եգիպտացիները նույնպես ունեցել են Շեսակ թագավոր, որը կորուստ է կորցրել տաճարը (930 թ., մ.թ.ա.): Վերջին անունների ծագումը Յ. Աճառյանը համարել է անհայտ, բայց հայերենում օգտագործված Սիսիաթուն, Սիսմամ, Սիսվարդ եւ Սիսթանգ անունները (ժբ, ժգ դարերի) ծննդաբերել է Սիս քաղաքի անունից⁽³²⁾:

Սիս հիմքով հայկական հնագույն անձնանուններից է Սիսիդը, որը եղել է Փոքր Յայքի իշխան (I դար, մ.թ.ա.), ինչպես հիշատակում է Ստրաբոնը⁽³³⁾:

Մեր եզրակացությունն այն է, որ Սիսի (Սիսիունի), Սիսիան, Սիսական եւ սիս արմատով մյուս տեղանունները նախնական ծագումով արտահայտել են մեկ իմաստ՝ ծիսարան կամ զոհարան:^{**}

Կարծում ենք, որ ծես բառը Փոքր Ասիայի (Յայասայի) հայկական ցեղերից է տարածվել հին ժողովուրդների մեջ:

Մարզի «ծիսարան» կամ «զոհարան» անվանակոչումը ստացել է նաեւ պաշտամունքային ծագում ունեցող՝ Գեղաբունի, Սոթք, Ծղուկ, Յաբանդ, Վայոց ձոր, Արեւիք եւ Երևան գավառանուններից, որոնց կան դրադառնանք առանձին, էլ չենք խոսում տարածքի պաշտամունքային բազմաթիվ տեղանունների մասին:

Ծանոթագրություն

12. Адонц Н., Там же, стр. 349.
13. Марр Н. Я., Этно и Глоттогония Восточной Европы, Термин Скиф, Л., 1935, стр. 14 – 15
14. Դարիքյան Ա., Յայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն: Եր., 1937, էջ 62:
15. Ղափանցյան Գր., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Եր., 1940, էջ 85:
16. Маркс К., Энгельс Ф., т. 19 Франкский период. М., 1961, стр. 496 и предисловия, стр. 189.
17. Աճառյան Յ., Լիակատար բերականություն հայոց լեզվի, հ. 6, Եր. 1971, էջ 765-766:
18. Георгиев В. И., Исследования по сравнительно- историческому языкознанию, М., 1958, стр. 173, 189.
19. Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 421.
20. Մալխասյան Ստ., Յայոց լեզվի բացատրական բառարան, հ. 2, Եր. 1945, էջ 336:

21. Меликишвили Г. А., ВДИ, 1948, N 2, стр. 41-48 и его же УКН, М., 1960, стр. 83.
22. Меликишвили Г. А., УКН, стр. 324-325, 364, 382 и Гвахария В. А. Словарь-Симфония урартского языка, М., 1963, стр. 35
23. Геродот, История в девяти книгах, Л., 1972, II 50, стр. 96.
24. Геродот, там же, II 50. Стр. 96.
25. Геродот, там же, I 65-66, стр. 30, 503.
26. Платон, Сочинения в трех томах, I, М., 1968, стр. 450.
27. Платон, там же, стр. 439.
28. Древнегреческо-русский словарь, т. I, М., 1958, стр. 782.
29. Георгиев В. И., там же, стр. 149-150.
30. Իսրայելյան Ս. Ա., Էրեբունի բերդ-քաղաքի պատմությունը, Եր., 1971, էջ 14-15:
31. Никонов В. А., Краткий топономический словарь, М., 1966.
32. Աճառյան Յ., Յայերեն անձնանունների բառարան, Եր., 1948, էջ 525:
33. Ստրաբոն. (Օտար աղբյուրները հայերի մասին), Եր., 1940, էջ 67

* Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների հիմնական մասի լեզուն պայմանականորեն անվանել են՝ վաներեն, վանյան, ուրարտյան, ուրարտերեն, նորիստիերեն (նորիստիերեն): Մենք գերադասեցինք նորիստիերեն անվանումը:

** Յայոց սրբազան սարը ունի Մասիս եւ Արարատ անունները: Արարատ անունը կապված է բիբլիական Նոյի առասպելի հետ: Գ. Ղափանցյանը զուգահեռներ է անցկացրել Արարատ եւ Բաբելյան Արալու լեռնանունների միջև, նկատի ունենալով «անմահական ջրի» ավանդությունը: Կարծիք կա նաեւ, որ Արարատ եւ Արագած անունները կապված են եղել հայոց Արա աստծու պաշտամունքի հետ:

Յայ բանահյուսության մեջ Արարատ անվան փոխարեն ունենք Մասիս: Պատմական Յայաստանում նույնպես կային Մասիուս (Տուր-Աբդին) սրբազան լեռ եւ Լեխ-Մասիս (Սիփան) սար: Մասիս անվան առաջին ստուգաբանողը Մովսես Խորենացին էր, որը կարծել էր, թե լեռանը ծագում է Ամասիա նահապետի անունից: Որոշ գիտնականներ Մասիս անունը ստուգաբանել են «մեծ սար»: Սա նույնպես ճիշտ չէ, որովհետեւ չեն հիմնավորել, արդո՞ք նրա «սիս» մասնիկը լեռ է նշանակում, թե մի ուրիշ բան:

Յին պատկերացումների համաձայն աստվածները բնակվում էին մեծ լեռների գագաթներին, եւ այդպիսի լեռները դարձան սրբազան լեռներ: Խեթոլոգ Գարստանգը նկատել է, որ «Լեռան սրբությունը փոքրասիական պաշտամունքների մեջ խաղաղացել է մեծ դեր», եւ բերում է Երզնկայի Ուրշա (XVI դար, մ. թ. ա.) լեռան օրինակը: Բայց չէ՞ որ Մասիսի մեջ էր թաքնված Արտավազդ աստվածը, ապա նրա գագաթին տապալ էր թողել ջրհեղեղի աստված Նոյը, էլ չենք խոսում Արարատ եւ Արագած անվանահիմքերում Արա աստծու առկայության մասին:

Մեր կարծիքով Մասիս անունը ծագում է փոքրասիական մայր աստվածուհու Մա անունից, որը «սիս» ածանցի հետ իմաստավորում է «Մա աստվածուհու ծիսավայր» կամ «զոհարան»: Պաշտամունքային նույն իմաստն էր կրում Փոքր Մասիսը՝ Սիսը: Իսկ ինչ վերաբերում է Լեխ-Մասիսի «Լեխ - ապականված» ածականին, ապա պետք է ասել, որ այն տրվել է քրիստոնեության ժամանակ:

Միասնական բնություններն ավարտվեցին

Նոր տիպի կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ այս տարվա բուհերի ընդունելության միասնական բնություններն անցկացվեցին շոգ հուլիսին:

Սյունիքի մարզում ձեւավորվել էր չորս բնական կենտրոն, երկուական՝ Կապանում եւ Գորիսում, մարզկենտրոնում՝ N2 ավագ եւ N6 հիմնական դպրոցներում: Միասնական բնությունները մեկնարկվեցին օտար լեզուներ առարկաներից: Նախապես Նշենք, որ համավարակի տարածման հանգամանքի կարեւորությամբ պայմանավորված՝ բնությունն հանձնողների միջեւ պահպանվում էր սոցիալական հեռավորությունը, նախապես բնական կենտրոնների ամբողջ տարածքն արտահանվում էր՝ ներառյալ անգամ գրիչները: Ուստիկանությունը եւս բնական կենտրոններում իրականացրել է հսկողություն՝ ավելորդ կուտակումներից խուսափելու համար: Քննություն յուրաքանչյուր մասնակցի տրամադրվում էին սանիտարական պաշտպանության անհատական միջոցներ՝ դիմակ, ձեռնոց, կատարվում էր դիմորդների եւ կազմակերպիչների ջերմաչափում:



Յենց համավարակով պայմանավորված՝ միասնական բնությունների ընթացքին կարողացաւք հետեւել մարզկենտրոնում տեղակայված երկու բնական կենտրոնում: Քննությունների առաջին օրը (օտար լեզուներ) Կապանի N6 հիմնական դպրոցում ձեւավորված բնական կենտրոնում անգլերեն լեզվից բնութագրող մասնակցել է 39 դիմորդ, մեկական՝ գերմաներեն եւ ֆրանսերեն, երեքը՝ ռուսերենից:

Յուլիսի 4-ին N2 ավագ դպրոցում դիմորդների գիտելիքները ստուգվել են հայոց պատմություն (29 դիմորդ), քիմիա (9 դիմորդ), աշխարհագրություն (5 դիմորդ) առարկաներից:

Ամենաձանրաբեռնվածը մաթեմատիկայի բնությունն էր, որ անցկացվեց հուլիսի 6-ին: Կապանի երկու բնական կենտրոնում բնությանը մասնակցում էր 108 դիմորդ (Սյունիքի մարզում՝ 312 դիմորդ):

Ի դեպ, մաթեմատիկայի բնությանը հուլիսի 6-ին մասնակցում էր հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Արայիկ Յարությունյանը, ով Սյունիքի մարզի բնական կենտրոններում ծանոթացավ հակահամաճարակային կանոնների պահպանմանը, այնուհետեւ հետաքրքրվեց դիմորդների նախընտրած մասնագիտություններով:

Միասնական բնությունների վերջին ակորդը հուլիսի 8-ին էր (անցկացվեց Կապանի N6 հիմնական դպրոցում) հայոց լեզու եւ հայ գրականություն (34 դիմորդ), կենսաբանություն (13 դիմորդ) եւ ֆիզիկա (ոչ մեկը չէր մասնակցում) առարկաներից:

Կորոնավիրուսի հարուցած դժվարություններով պայմանավորված՝ դիմորդները բուհ ընդունվելու համար բնությունն հանձնեցին մեկ առարկայից:

Դիմորդների միասնական բնության գնահատականի բողոքարկումը տեղի կունենա գնահատականը ստանալուց (հրապարակվելուց) հետո:

Իսկ միասնական բնությունների վերջնական արդյունքները հայտնի կդառնան օգոստոսի կեսին:

Սյունիքում շարունակում է չլուծված մալ բրդի մթերման հարցը

Հուլիսի 5-ին «Սյունյաց երկիր» ստեղծագործական խումբը, Մեծ Իշխանասար կատարած ուխտագնացության ընթացքում, եղավ Իշխանասարի հարավ-արևելյան ստորոտում գտնվող խոշոր և մանր եղջերավոր անասունների ֆերմաներում, յայլադներում:

Ակների, Հարթաշենի, Գորիս քաղաքի անասնապահների հետ հանդիպումների ընթացքում բազմաթիվ հարցեր հնչեցին:

Ցավոտ է հատկապես ոչխարի բրդի մթերման հարցը, որի վկայություններից մեկն էլ Գորիս քաղաքի բնակիչ Համլետ Թոխասնցի տնտեսության օրինակն է:

Համլետ Թոխասնցը կնոջ՝ Հերմինե Մաթևոսյանի հետ է հեռագնա այդ յայլադում:

Համլետը եղբոր հետ սեփական 1200 գլուխ ոչխարի և 70 գլուխ կովի ամառային խնամքն է իրականացնում այդ արտավայրում:

Մեր այցելության նախօրեին նրա տնտեսությունում ավարտել էին ոչխարի խուզը:

Սակայն ստացված մոտ 3 տոննա բուրդը ոչ թե ուրախություն է պարգևել անասնապահական այդ տնտեսությանն ու դարձել եկամտի աղբյուր, այլ հերթական անգամ մտահոգության տեղիք է տվել:

– Բուրդն առնող չկա, բուրդը մթերող չկա, կփորձենք ազատազրկված տարածքներում իրացնել ապրանքափոխանակությունը, իսկ եթե չստացվի, ապա ստիպված կլինենք վառել, ինչպես արել ենք նախորդ տարի-



Ներին, – ասաց Համլետ Թոխասնցը:

Համլետ Թոխասնցի ուրթում հանդիպեցինք նաև ոչխար խուզողների խմբի հետ: Տեղ գյուղից վեց երիտասարդ (Գրավիկ Իսախանյան, Հրատ Ավագյան, Արտուր Ավագյան, Արայիկ Ավագյան, Մերյուժա Դուշունց և Սոս Լերկարարանց) այդ կողմերում միասին իրականացնում են ոչխարի խուզը, մեկ ոչխարը՝ 500 դրամով:

Նրանք իրենց գործի բերումով բազմաթիվ օրինակների են ակնատես եղել, երբ ոչխարաբույծները կանգնել են բրդի մթերման ակունքի խնդրի առջև: Միայն Գորիսի տարածաշրջանում տարեկան մի բանի տասնյակ տոննա բուրդ է հրկիզվում, որի հետևանքով ոչխարաբույծները զրկվում են այդ մթերքից ակնկալվող եկամտից:

||

«Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատը» կընդլայնվի եւ կավելացնի արտադրողականությունը. դրական եզրակացություն՝ փորձաքննական 12 պահանջով



«Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն կընդլայնվի իր տեղամասը եւ տարեկան 3,5 մլն տ տարեկան արտադրողականությունը կդարձնի 4,5 մլն տ: Հրչակա միջավայրի նախարարությունը դրական եզրակացություն է տվել կոմբինատի այդ նախագծին:

Կոմբինատի ընդլայնման նախագծով լրացուցիչ տարածքներ չեն խախտվելու, նախատեսվող սարքավորումները տեղադրվելու են գործող արտադրամասերի տարածքում: Բացահանքի ընդլայնումն իրականացվելու է գոյություն ունեցող լեռնահատակացման սահմաններում, լրացուցիչ հողատարածքների խախտում չի նախատեսվում, սանիտարապաշտպանիչ գոտին մնում է անփոփոխ: Մինչդեռ նախագծում նշվում էր, որ լցակայանի ընդլայնման արդյունքում օտարվելու է 22 հա նոր տարածք:

Բոլոր 3 պաշտպանության տարածքները եւս մնում են անփոփոխ: Գործող պաշտպանությունը եւ պոմպակայաններն ամբողջությամբ կապահովեն տարեկան 4,5 մլն տ նախատեսվող արտադրողականությունը:

Համաձայն փորձաքննության նախագծի եզրակացության տվյալների՝ ներկայումս 2-րդ եւ 3-րդ պաշտպանությունն արդեն միացված են ջրի շրջանառու համակարգին, սակայն 1-ին՝ ամենամեծ («Դավազամի» անվամբ) պաշտպանի պարզվածքն անմիջապես թափվում է Արաքս գետ: Կոմբինատի խտացման արտադրամասից պղնձի խտացուցիչ պարզվածքը թափվում է Կարճեան գետ՝ Արաքսի հետ միացման կետից մոտ 50 մ հեռավորության վրա: Վերագինման ներդրումային ծրագիրն, ըստ փուլերի ավարտելուց հետո, Ագարակի հարստացուցիչ ֆաբրիկան աշխատելու է լրիվ շրջանառու համակարգով:

Ֆաբրիկայի վերագինման համար նախատեսված ներդրումները գնահատվել են 16 մլն 840 հազար դոլար:

Ինչպես նշվում է եզրակացության մեջ, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության փուլերում Մեղրի համայնքի Ագարակ բնակավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Նապագծային փաստաթղթերի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ ՀՄ նախարարության ստորաբաժանումներից եւ պետական լիազոր մարմիններից՝ Առողջապահության, կրթության, գիտության, սպորտի եւ մշակույթի, Արտակարգ իրավիճակների նախարարություններից: Ստացված կարծիքներով եւ փորձաքննության արդյունքում առաջացած դիտողություններով ու առաջարկություններով նախագիծը եւ ՀՄԱԳ հաշվետվությունը լրամշակվել է:

Դրական եզրակացության տալով՝ ՀՄ նախարարությունը փորձաքննական 12 պահանջ է առաջադրել Ագարակի կոմբինատին: Մասնավորապես,

1. մինչ գործունեության իրականացումը՝ ստանալ համապատասխան համաձայնեցումները եւ թույլտվությունները,
2. ապահովել ՀՄԱԳ-ում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացումը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական եւ շահագործման հետ կապված բոլոր նորմերը,
3. նախագծում նախատեսված ժամկետում, այն է՝ 2021թ.-ը, առաջնահերթ վերականգնել նախկինում գործող ջրի շրջանառու համակարգը՝ 1-ին պաշտպանից եւ այն միացնել 2-րդ եւ 3-րդ պաշտպանության արդեն կառուցված ջրի շրջանառու համակարգերին՝ որպես մեկ միասնական համակարգ,
4. մինչև 1-ին «Դավազամի» պաշտպանի պատնեշի բարձրացումը 920 կիլո, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացնել պաշտպանի ընդլայնման ՀՄԱԳ հաշվետվությունը եւ նախագիծը (պաշտպանի կայունության նոր հաշվարկով),
5. բացահանքի ընդլայնման աշխատանքների 2-րդ փուլի համապատասխան փաստաթղթերը, մինչև իրականացումը, ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության,
6. օգտակար հանածոյի արդյունահանման արդյունքում բոլոր խախտված հողերի (ճանապարհներ, արտադրական հրապարակներ, պաշտպաններ, պայտուցիկ կյուբի պահեստ, մաքրման լճակ, երկրորդային պարզման լճակներ ընդերքօտագործման թափոնների օբյեկտների եւ այլն) վերականգնման՝ ռեկուլտիվացիոն աշխատանքների համապատասխան փաստաթղթերը ներ-

Սյունիքում կգործի վեց սպանդանոց

Վերջին ամիսներին լրատվամիջոցներում եւ հասարակության մեջ բուռն քննարկվող թեմաներից էր բնակչությանը սպանդանոցային ծագման մամուլների մատակարարումը: Այդ առիթով կառավարության նիստում վարչապետ Նիկոլ Փաշինյանը ասել էր. «Այսօր մեզ մոտ համաճարակ է, առաջիկայում բոլոր կանխատեսումներով համաճարակի ժամանակ լինելու են մարտահրավերներ, եւ մենք ասֆալտների վրա մորթվող, վաճառվող, գնվող մսի կամ ընդհանրապես սննդամթերքի պատմությանը պետք է վերջ դնենք օր առաջ»:

Խնդիրն ուներ նախապատմություն. 2020 թ. հունվարի 15-ից մսի վաճառքով զբաղվողների համար պարտադիր սպանդանոցային մորթի խիստ վերահսկողություն էր սահմանվել, արգելվել էր բակային մորթը: Սա, սակայն, հարուցել էր որոշ անասնապահների եւ մասվաճառների դժգոհությունը, նրանք ակցիաներ էին իրականացնում՝ չքանկանալով իրենց անասունների (խոսքը անասնապահներին է վերաբերում) մորթն իրականացնել սպանդանոցներում: Նրանք մատնանշում էին որոշ խնդիրներ, այդ թվում՝ կենդանիների տեղափոխելն ու սպանդանոցների սակավ լինելը: Բողոքողների արձագանքելով՝ գործադիրը մինչեւ հուլիսի 1-ը հետաձգել էր պարտադիր սպանդանոցային մուտքի վերաբերյալ իր որոշման կատարման նկատմամբ խիստ վերահսկողության իրականացումը:

Նախ հետաքրքրվեցինք Սյունիքում առկա սպանդանոցներով: Այժմ Սյունիքում գործող սպանդանոցները երկուսն են՝ «Մարիլա» ՍՊԸ-ի եւ «Գյուղարտ» ՓԲԸ-ի սպանդանոցները: «Մարիլան» ունի սեփական տնտեսություն, սպանդանոցը ներտնտեսային է, պետական գներով Սյունիքի մանկապարտեզներին ապահովում է սպանդանոցում մորթի ենթարկված տավարի մսով: «Գյուղարտ» ՓԲԸ-ն, իրական կազմակերպությունների հետ համագործակցելով, ոչխարի միս է արտահանում Իրան: Ընկերությունն իր տնտեսության մեջ ներդրել է խոշոր եղջերավոր անասունների մորթի հոսքագիծ: Այս ընկերությունը ծառայություններ մատուցող կազմակերպություն է, ունի սանիտարական անձնագրով, ստանարանով մեքենաներ եւ միշտ պատրաստակամություն

է հայտնել գյուղացիներից անասուններ ընդունել, սպանդի ենթարկել եւ մամուլները վերադարձնել տիրոջը, իհարկե, որոշակի գումարի դիմաց:

Գորիսի տարածաշրջանում եւս մեկ սպանդանոց գործարկման փուլում է, օրենս սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը ստուգեց սպանդանոցի պայմանների համապատասխանությունը պահանջվող չափանիշներին: Աշխատանքային այցով Սյունիքում գտնվող ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանը, Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանը, սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գեորգի Ավետիսյանը եւ այլ պաշտոնատար անձինք եղան սպանդանոցում, ծանոթացան դրա պայմաններին: Հուլիսի 25-ից հետո փաստաթղթային որոշ ձեւակերպումներից հետո սպանդանոցը կսկսի գործել: Իսկ ընդհանրապես առաջիկա 1-1.5 ամսում Սյունիքում գործելու է վեց սպանդանոց: Նոր սպանդանոցները հիմնականում շարք կմտնեն Գորիսի եւ Սիսիանի տարածաշրջաններում: Խնդրահարույց է մնում Մեղրիի տարածաշրջանը, որտեղ նախատեսվում է անասունների մորթն իրականացնել շարժական սպանդանոցի միջոցով:

– Հուլիսի 1-ից բնակչությանը պիտի մատակարարվի սպանդանոցային ծագման տավարի միս, այլեւս զգուշացումներ չեն լինելու, իրականացնելու ենք ստուգումներ եւ վարչական վարույթներ: Հիշումներ մի բանի անգամ արդեն եղել են, զիջման տեղ այլեւս չի մնացել, – «Սյունյաց երկրի» ասաց սննդի անվտանգության տեսչության Սյունիքի մարզային կենտրոնի պետ Արթուր Խաչատրյանը, – անդարձ պիտի անցնեն այն ժամանակները, երբ մարդատար մեքենայի բեռնախցիկում միս են տեղափոխում վաճառքի կետեր, ինչը սանիտարական ոչ մի նորմի մեջ չի տեղավորվում:

Հանրապետության վարչապետը խորհրդակցություններից մեկում եւս մի անգամ նշել է. «Հուլիսի 2-ից այլեւս այդ թեմային ոչ մի դեպքում, ոչ մի պատճառաբանությամբ չեն վերադառնալու, Հայաստանի Հանրապետությունը պետք է առաջնորդվի ամենաբարձր ժամանակակից չափանիշներով»:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Если Бога нет, всё позволено

Որև մեծ գրող Ֆյոդոր Դոստոևսկու «Կարամազով եղբայրներ» ստեղծագործությունից վերցված այս հայտնի միտքը, կարծում եմ, արդեն հուշում է, թե ինչի մասին կուզենայի արտահայտվել: Այո, խոսելու եմ վերջին օրերին թեժ քննարկման թեմա դարձած «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի շուրջ տեղի ունեցող գործընթացների մասին: Հայտնի փաստ է, որ հանրակրթության պետական չափորոշիչ վերջերս հրապարակված նախագծով նախատեսվում է դադարեցնել «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդումը որպես առանձին առարկա՝ այն ինտեգրելով «Հայոց պատմություն» առարկայի կրթական ծրագրում: Արդեն առիթ եմ ունեցել իմ բացասական վերաբերմունքը հայտնել այս գործընթացի նկատմամբ եւ այժմ էլ ավելորդ չեմ համարում եւս մեկ անգամ անդրադառնալ այս թեմային: Միանգամից ասեմ, որ չեմ պատրաստվում մեկ անգամ եւս ընթերցողին ներկայացնել Հայ Առաքելական եկեղեցու անփոխարինելի դերակատարությունը հայ դպրոցի կայացման գործում: Հայ դպրոցը Հայ Առաքելական եկեղեցու հարազատ զավակն է, եւ դա անժխտելի պատմական փաստ է: Կուզենայի հարցին մոտենալ մեկ այլ տեսանկյունից:

Նախ՝ ճիշտ չեմ համարում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան հունանիտար բնույթի առարկա համարելը: Իմ համոզմամբ՝ այն առավելապես բնագիտական բնույթ է կրում: Ինչո՞ւ: Այստեղ մարդուն նախեստառաջ դիտարկելով որպես հոգեւոր եակ՝ նպատակ է դրվում սովորողին ներկայացնել ժամանակակից մարդու կողմից հետեւողականորեն անտեսվող հոգեւոր աշխարհն ու նրանում գործող օրինաչափությունները: Այլ խոսքով ասած՝ ՀԵՊ առարկան մարդուն հոգեւոր եւ բարոյական կյանքի «Ֆիզիկան» է կամ «Անատոմիան»: Այստեղ են քննարկվում այնպիսի կարեւորագույն հարցեր, ինչպիսիք են՝ Աստված, ազգ, ժողովուրդ, մարդ, կյանք, քրիստոնեական բարոյագիտություն, մարդու կյանքի իմաստ, խիղճ, մեղք, առաքինություն, ընտանիք, հայրենիք եւ հայրենասիրություն, սեր, բանականություն եւ այլն, եւ այլն: Այստեղ է երեխային հիմնավորված ներկայացվում, թե ինչու պետք է լինել առաքինի, եւ ոչ՝ մեղազգործ, ինչու պետք է լինել եղբայրասեր, եւ ոչ՝ նախանձ, ինչու պետք է լինել ժուժկալ, եւ ոչ՝ որկրամուլ, ինչու պետք է լինել համեստ, եւ ոչ՝ ամբարտավան, ինչու պետք է լինել ճշմարտախոս, եւ ոչ՝ ստախոս: Կարենո՞ր հարցեր են: Անշուշտ՝ շատ: Անհրաժեշտություն կա՞ դրանք քննարկել առանձին առարկայի շրջանակում: Իմ կարծիքով՝ այո: Ինֆորմացիայի

այս անգամ եւ շատ վտանգավոր հորձանուտում ժամանակակից մարդու եւ, առավել եւս, երեխայի առաջ ծառայել է ինքնաճանաչության լուրջ խնդիր: Մարդը սկսել է դժվարությամբ տարբերել կեղծիքը ճշմարտությունից, օգտակարը՝ վնասակարից, ճիշտը՝ սխալից: Հետեւողականորեն արժեզրկվում են բարոյական եւ հոգեւոր արժանատիկ ճշմարտություններ: Մենք համառորեն չենք ցանկանում ընդունել, որ ցանկացած հասարակության բարոյական եւ հոգեւոր անկումն անխուսափելիորեն հանգեցնում է ֆիզիկական կործանման: Որտե՞ղ են հիմա պատմությանը քաջ հայտնի «հզոր» կայսրությունները, ի՞նչ է ներկայումս կատարվում ԱՄՆ-ում եւ արեւմտյան «բաղաբակիր» երկրներում, եւ, վերջապես, որտեղի՞ց մեր հայ հասարակության մեջ այսքան կեղծիք եւ ատելություն: Ակնհայտ է, որ դպրոցում երեխան չպետք է պարզապես գիտելիք ստանա: Առաջին հերթին երեխան պետք է դաստիարակվի եւ ձեւավորվի որպես առաքինություններ կրող անձ: Եվ այստեղ անփոխարինելի եմ համարում ՀԵՊ առարկայի դերն ու նշանակությունը: Այո, մեզ պետք են լավ ծրագրավորողներ, ֆիզիկոսներ, քիմիկոսներ, կենսաբաններ, լեզվաբաններ, պատմաբաններ, բայց ավելի շատ հասարակությունը կարիք ունի բարոյական եւ հոգեւոր ճշմարիտ արժեքներ կրող անհատների, առավել եւս՝ մտավորականության: Եվ միայն այդ դեպքում կունենանք եղբայրասիրության ոգով ցեմենտված կուռ եւ միաբան հասարակություն: Իսկ մերժելով Աստծուն՝ մերժում ենք սերը, բարոյականությունն ու խիղճը, ընտրում դեպի ամենաթողություն եւ քաոս տանող ուղիղ ճանապարհը, որի վերջին հանգրվանն ինքնակործանումն է: Սա անխախտորեն գործող բնական օրենք է: Եվ ուրեմն՝ լինելք առողջ եւ ողջամիտ:

Աստված պահապան բոլորիս:

Յ.Գ. Ի հավելումն ասվածի՝ ավելացնեմ նաեւ, որ առաջին քրիստոնյա պետության հանրակրթության պետական չափորոշիչում բացակայում է «քրիստոնյա» բառը, նախատեսվում է նաեւ նվազեցնել «Հայոց լեզու, գրականություն» եւ «Նախնական գիւնդրական պատրաստություն» առարկաներին հատկացվող ժամաքանակները: Կարծում եք պատահականությունն է:

Յ.Գ. Իսկ ժամանակակից «մտավորականությանը» կոչ եմ անում արձագանքել ոչ միայն գույքահարկի բարձրացմանը, ԽԱՉԱՏՈՒ ԲԱԴԱՆԱՆ

- 11. ՇՄՆ ներկայացնել ՇՄԱԳ հաշվետվությանը ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների նկատմամբ մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվություն՝ ներառյալ եռամսյակային հարողորմները,
 - 12. մինչեւ 2022թ. մայիս ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին ներկայացնել ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը, իսկ ընդերքի մասին օրենսգրքով նախատեսված դեպքերում նաեւ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը եւ ֆինանսական երաշխիքները:
- Հիշեցնենք, որ Ազարակի պղնձամուլիբդենային կոմբինատը ռուսական «Գեո-Պրոմայնինգ» խմբի ակտիվն է եւ նույն սեփականատերերի ձեռքում է, ինչ Սոթեի ոսկու հանքավայրը: Երկու ռուս գործարարներ՝ Սիման Պոլարենկինը եւ Ռոման Տրոցենկոն՝ համապատասխանաբար 50,5 եւ 48,2 % բաժնեմաս ունեն:
- Ազարակի ՊՄԿ-ն 2016-2017թթ. արտադրել է տարեկան 30 հազար տոննա պղինձ եւ 450 տոննա մոլիբդենի խտանյութ, որի արժեքը կազմել է ավելի քան 13 մլրդ դրամ:
- ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱՍՈՒԼԻԲԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ**

- 7. ջրօգտագործումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով, ընկերության գործունեությամբ չխոչընդոտել Ազարակ, Կարճեանս ընկերությունների խմելու-կենցաղային եւ ոռոգման ջրամատակարարումները: Նոր ջրօգտագործման թույլտվության ստացման համար ՇՄՆ ներկայացնել հայտ, որում կիսատկեցվեն ջրառի քանակներն ըստ ջրային ռեսուրսների,
- 8. բացառել շրջանառու համակարգից եւ արչամբարներից ջրի արտահոսքը բաց ավազան, ինչպես նաեւ Կարճեանս եւ Արաքս գետեր,
- 9. ավտոհավաքակայանի կեղտաջրերի մաքրված հոսքաջրերում, նախագծային ցուցանիշներին համապատասխան, ջրի նորմատիվ որակը եւ աղտոտող նյութերի թույլատրելի կոնցենտրացիաներն ապահովելուց հետո միայն օգտագործել ոռոգման նպատակով կամ հեռացնել Կարճեանս գետ,
- 10. ընկերությանը 2018թ. օգոստոսի 10-ին տրված ջրօգտագործման թույլտվության պահանջի համաձայն՝ բոլոր ջրառի կետերն ապահովել ջրաչափական դիտարկվող եւ սահմանված կարգով կնքված ջրաչափերով,



Կապանում գործարկվեց Հայաստանի ամենաերկար զիֆլայնը

Հուլիսի 20-ին գործարկվեց Հայաստանի ամենաերկար զիֆլայնը, որն անցնում է Կապանի վրայով եւ իրար կապում քաղաքի Հինարարների ու Յուսան Ավետիսյան թաղամասերը:

Գործարկման արարողությանը ներկա էին Կապանի համայնքապետ Գեորգ Փարսյանը, գործարարներ եւ հյուրեր:

Չիֆլայնի շինարարությունն սկսվել էր 2019 թվականից. մտահոգացման հեղինակն ու ներդրողը կապանցի գործարար, «Գրանդ Յուսան» հյուրանոցային համալիրի սեփականատեր Դավիթ Սողոմոնյանն է:

Երկրորդմանի ճուրղաների ընդհանուր երկարությունը 1750 մ է, մի կետից մյուս

կետը՝ 680 մ, մյուս ճուրղանի՝ 1080 մետր, որը Հայաստանում ամենաերկարն է: Ճուրղանի բարձրությունը գետնից 118 մ է, որը եւս ՀՀ-ում ամենաբարձրն է, արագությունը մինչեւ 120 կմ/ժ է: Չիֆլայնն իր տեսակով տարբերվում է նաեւ աշխարհում եղած մյուսներից նրանով, որ անցնում է քաղաքի ու միջպետական ճանապարհի վրայով:

Ընդհանուր սուրը՝ մեկ կողմով երթը եւ մյուս կողմով վերադարձը տեւում է մոտ 40 րոպե: Չիֆլայնի գործարկումը լուրջ ներդրում ու նոր զարկ է զբոսաշրջությանը ոչ միայն Կապանում ու Սյունիքում, այլեւ՝ Հայաստանում:

Ավազանին քննարկեց նաեւ բնապահպանական հարցեր

Հուլիսի 14-ին Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ավազանու արտահերթ նիստը, որը վարում էր համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանը: Ներկա էր ավազանու 8 անդամ:

Օրակարգում ընդգրկված էր 10 հարց, որոնք հիմնականում վերաբերում էին Կապան համայնքի 2020 թվականի քյուլջեի առաջին կիսամյակի երկրորդ եռամսյակի կատարման արդյունքները ներկայացնելուն, քյուլջեում փոփոխություններ կատարելուն, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելուն, ինչպես նաեւ օգտագործման տրամադրելուն, համայնքի հողային հաշվեկշիռն համաձայնություն տալուն եւ այլն:

Նիստի օրակարգում ընդգրկված հարցերից մեկն էր նաեւ Կապան համայնքի շրջակա

միջավայրի եւ բնակչության առողջության պահպանման 2021 թվականի ծրագիրը:

Վերոնշյալ ծրագիրն իր մեջ ներառում է հետեւյալ միջոցառումները.

Կապան գետի վրա ջրավազանի կառուցում, ինչի արդյունքում կունենանք գետի աղտոտվածությունը նվազեցնում, դրական ազդեցություն՝ գետի կենսաբազմազանության վրա, ինչպես նաեւ քաղաքի գեղեցիկ տեսքի վերականգնում,

Արծվանիկ գյուղի բուժկետի նորոգում, ինչի արդյունքում կունենանք գյուղի բնակչությանը մատուցվող առաջին բուժօգնության եւ բուժօգնության մակարդակի բարելավվում:

Ավազանի հաստատեց ներկայացված բոլոր որոշումների նախագծերը:

Օգտվելով առիթից՝ ավազանու նիստի ընթացքում քննարկվեց նաեւ բնակչության կողմից բուռն արձագանք ստացած՝ Շահումյան փողոցի մայրերի վերանորոգման աշխատանքների շրջանակում ծառերի հատման հարցը:

Այս թեմայի շուրջ հուզող բոլոր հարցերի պատասխանները կգտնեք՝ դիտելով ավազանու նիստի առցանց հեռարձակումը:

ԿԱԳԱՆԻ ՀԱՄԱՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Արտագնա խորհրդակցություն Գորիսում

Սյունիքի մարզպետ Յուսան Պողոսյանը Գորիսում անց է կացրել արտագնա խորհրդակցություն, որին մասնակցել են Գորիս, Տեղ ու Տաթեւ համայնքների ղեկավարները, ԱՄԾ պատգամավոր Արմեն Խաչատրյանը, ԱԱԾ, Ոստիկանության, ԱԻՆ, Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային

կենտրոնի Գորիսի պատասխանատուները, Գորիսի բժշկական կենտրոնի տնօրենը, Գորիս համայնքի ղեկավարի տեղակալները:

Հանդիպման առիթը տարածաշրջանում նոր կրոնամարտական հիվանդության տարածման մտահոգիչ թվերն են, ու խորհրդակցության ընթացքում քննարկվեցին համավարակի ներկա վիճակը, դրա դեմ տարվող պայքարի ու կանխարգելման միջոցառումները:

Հունան Պողոսյանը հանձնարարեց շարունակել բնակչության շրջանում իրազեկման եւ կանխարգելիչ աշխատանքները:

14 ՀՈՒՆԻՍԻ 2020 Թ.



Ն.Ա.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՍՈՒՐԲ ՍՈՖԻԱՅԻ ՏԱՃԱՐ-ԹԱՆԳԱՐԱՆԸ ՄՉԿԻԹԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ ԹՈՒՐԵԻԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԱՌԻԹՈՎ



Սուրբ Սոֆիայի տաճար (Ստամբուլ)

Սայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ցավով արձանագրեցինք տակավին մի բանի օր առաջ՝ հուլիսի 10-ին, Թուրքիայի Հանրապետության Նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կողմից Օրթոդոքս Եկեղեցիների և բրիտանական աշխարհի համար կարեւոր նշանակություն ունեցող Սուրբ Սոֆիայի տաճարը թանգարանից մզկիթի վերածելու որոշումը: Հակառակ համաբրիտանական տարբեր կազմակերպությունների, եկեղեցապետերի ու բաղադրական առաջնորդների կոչերին՝ թուրքական կառավարությունն ընդունեց միակողմանի ու դատապարտելի որոշում՝ դրանով իսկ խախտելով Թուրքիայում

ազգային կրոնական փոքրամասնությունների իրավունքները: Ցավով ենք կշռում, որ միլիոնավոր բրիտանական կոչերն ու անհանգստություններն անտեսվեցին, հաշվի չառնվեց Նույնիսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Սուրբ Սոֆիայի տաճարը համաշխարհային մշակութային գանձարանում ներառված լինելու փաստը: Թուրքիայի կառավարության գործողությունը ծանր հուշեր է արթնացնում դարեր շարունակ Օսմանյան իշխանությունների կողմից հայ ժողովրդի, ինչպես նաև այլ բրիտանական ազգերի սրբատեղիների պղծման ու կործանման վերաբերյալ: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ու հայ

ժողովուրդը, որպես Օսմանյան Թուրքիայում Ցեղասպանություն վերապրած ժողովուրդ, կիսում է օրթոդոքս եղբայրների և քույրերի ցավն ու անհանգստությունը: Հայոց Եկեղեցին դատապարտում է բաղադրական շահերից ելնող՝ կրոնների փոխըմբռնման ու երկխոսության գործընթացին մեծապես վնասող Թուրքիայի կառավարության որոշումը՝ միաժամանակ կոչ անելով վերանայել այն ու վերադառնալ Թուրքիայում տարբեր կրոնական համայնքների խաղաղ աղոթական համակցության սկզբունքին: Պատմության վայրիվերումների ու բաղադրական փոփոխությունների ընթացքում Սուրբ Սոֆիայի տաճարը պատմական և մշակութային

արժեքից զատ ձեռք է բերել նաև տարբեր՝ կրոնական, մշակութային և բաղադրական նշանակություն՝ դառնալով ոչ թե բաղադրակցությունների բախման, այլ համագործակցության և մարդկության միասնության խորհրդանիշ: Միակողմանի այդ որոշման պատճառով ստեղծված դժվարին այս իրավիճակում արդյունավետ գորակից ենք Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարք, մեր սիրեցյալ եղբայր Նորին Սրբություն Բարդուղիմեոս պատրիարքին և Օրթոդոքս Եկեղեցու մեր քույրերին ու եղբայրներին: **ՄԱՅՐ ԱԹՈՒՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

Նահապետ Ղեւոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակին նվիրված առցանց գիտաժողով


Հուլիսի 6-ին մեկնարկեց Եռօրյա առցանց գիտաժողով՝ նվիրված հայ մեծ բանաստեղծ, բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, Հայոց Նահապետ Ղեւոնդ Ալիշանի ծննդյան 200- ամյակին:



ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-բարոնուդար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, Մխիթարյան միաբանության բա-հանայապետական պատվիրակ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Տ. Լեւոն արքե-

պիսկոպոս Չեքիանը, Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Վահան Տեր-Ղեւոնդյանը, Հայաստանի գրողների միության քարտուղար, բանասիրական գիտությունների դոկտոր Պետրոս Դեմիրճյանը: Այնուհետև տեղի ունեցավ Մխիթարյան միաբանության հայրերից Վահան վարդապետ Օհանյանի՝ Ղեւոնդ Ալիշանի նա-մակագրական ժառանգությունն ամփոփող ժողովածուի էլեկտրոնային տարբերակի շնորհանդես-ներկայացումը: Ցուցադրվեց Ղեւոնդ Ալիշանին նվիրված վավերագրական ֆիլմ, որը պատրաստվել է Վենետիկում: Եռօրյա գիտաժողովին մասնակցում են ՀՀ ԳԱԱ ինստիտուտների, ԲՈՒՀ-երի, Մխիթարյան միաբանության, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատողներ, վարդապետներ: Գիտաժողովի թեմատիկ նիստերում նրանք հանդես կգան շուրջ 60 գիտական գե-կուցումներով՝ ներկայացնելով Ղեւոնդ Ալի-շանի գիտագրական ժառանգությունը: Կվեր-լուծվեն Ալիշանի ստեղծագործությունները,

կներկայացվի, թե ինչպես է Հայոց Նահապետի կերպարն արտացոլվել հայ գրականության և արվեստի մեջ: Մեծ թիվ են կազմում Ալիշանի դեռեւս անտիպ աշխատանքները, որոնց մասին տեղեկություններ կտրվեն գիտա-ժողովի ընթացքում և կներկայացվեն դրանց հրատարակության հետ կապված հարցերը: Գիտաժողովը կազմակերպել են ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտու-թյունների բաժանմունքը, Մխիթարյան միա-բանությունը, Երեւանի պետական համա-սարանը, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստի-տուտը (Մատենադարան): Ղեւոնդ Ալիշանը (Քերովբե Պետրոս-Մարգարի Ալիշանյան) ծնվել է 1820թ. հու-լիսի 6-ին Կոստանդնուպոլսում՝ դրամա-գետ-հնագետի ընտանիքում: Սկզբնական կրթությունը տեղի Չալքիայան վարժարանում ստանալուց (1830-1832թթ.) հետո ուսումը շարունակել է Վենետիկի Մխիթարյանների դպրոցում (1832-1841թթ.): Հետագայում աշխատել է Ռաֆայելյան վարժարանում՝ ուսուցիչ (1841-1850թթ.), ապա՝ 1866-1872թթ., տեսուչ (1848-ից), «Բազմավեպ»-ի խմբագիր (1849-1851թթ.), ուսուցիչ Փարիզի Մուրատյան վարժարանում (1859-1861): 1872թ-ից ամբողջովին նվիրվել է գիտական գործունեության: Եղել է Ֆրանսիական ակադեմիայի Պատվո լեգեոնի դափնեկիր (1886թ.), Եսայի փիլիսոփայական ակա-դեմիայի պատվավոր անդամ և դոկտոր, անդամակցել է իտալական և ռուսական գիտական ընկերություններին: Իր գիտական հսկայական ժառանգու-թյամբ Ալիշանը մեծապես նպաստել է հայ-րենական գիտության զարգացմանը: Նրա գործերից շատերն այսօր էլ ունեն ճանա-չողական արժեք և սկզբնաղբյուրի նշանա-կություն:



Ղեւոնդ Ալիշանը մահացել է 1901 թվա-կանի նոյեմբերի 9-ին և թաղվել Վենետիկի Սուրբ Ղազար կղզում: **ՀՀ ԳԱԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՐԳՈՒՄ ԾԱՆՈՒԹՅՈՒՆ 08.07.2020Թ.**

Այոնյաց երկիր
ՀԻՄՆԱԴՐՈՒ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ «ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱԾԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե 2003Թ. ՀՈԿԵՏԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Այոնիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
☎ (+374 285) 5 25 63
☎ (+374 91) 45 90 47
☎ (+374 77) 45 90 47
✉ syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կյուբերը ներկայացնել մեքենագիր վիճակում:
«ԳՈՎԱԾԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում
տպագրվող կյուբերի համար խմբագ-րությունը պատասխանատվություն չի կրում:
Հոլմը «Այոնյաց երկիր» պարտադիր է: Թ Նշանի տակ տպագրվում են գովազդային կյուբեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրականը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 21.07.2020թ.: